Այլ արդ՝ ելցուք մեք և մացուք 'ի հարկս սիրոյ և խաղաղութեան՝ ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամացն առն իշխանաց կողմնակալութենէ, այլ 'ի կամս այնմ, որում բնական ընութիւնս մարդոյ խոստովանի արդարութիւն, և ըստ սովորութեան բոլոր աշխարհի և ամենայն խոհեմ, սրանց, որում կամին խաղաղութիւն խօսիլ 'ի մէջ հակառակորդաց, նոյն զունակ թողուլ պարտիմք մեք բարեգործութիւն և չարարարութիւն թագաւորաց և իշխանաց նախնեաց մերոց, զի մի ոք գովաբանեսցի երախտիս և վաստակս նախնեաց 'ի վերայ աշխարհին և ժողովրդեան Հայոց, և մի ոք անգոսնեսցի յոռի և ծուլութիւն վաստակաւ նախնեաց մերոց իշխանաց, քանզի ամենեքեան ըստ անձին իւրեանց զոր ինչ կարասցին գործել ոչ խնայեցին գործելոյ, այլ զոր ինչ եղև անցաւ, և այն էր բաժին մեր 'ի ներքոյ արեգական։ Եւ արդ՝ իրաւունք և արդարութիւն խոստանան, զի միշտ մեք պատուելով պահիցեմք 'ի վերայ մեր անունն պատուական Հայկա, որ եղև սկիզբ և հռչակող անուն իւր 'ի վերայ մեր, զի աշխարհ սովաւ ծանեաւ ազգն Հայոց և անուանեցաք Հայք, և սերնդովք սորայ անուանեցաք 'ի այլ ազգէ Արմէնիանք. նաև պատուելի ընդ մէջ մեր են Վաղարշակ Արշակունին, Աշօտ Բակրատունին և Ռոբէնեանք միաբան սերնդովք իւրեանց, զի պահպանեցին ազգին Հայոց պահե-